ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

Գարիկ Քեռյան

Բանալի բառեր՝ Ռուսաստան, արտաքին քաղաքականություն, աշխարհաքաղաքական շահեր, ԱՄՆ, ԵՄ, եվրասիական ինտեգրում:

Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության դաշնակցային և ռազմավարական համագործակցությունը հրամայաբար պահանջում է հնարավորինս ճիշտ կանխատեսումների համար մշտապես հետևել Կրեմլի արտաքին քաղաքականության բոլոր զարգացումներին և փոփոխություններին: Այս հանգամանքը կարևորվում է նաև մեր տարածաշրջանի բարդ և կոնֆլիկտային բնույթով, Ադրբեջանի և Թուրքիայի հետ երկարատև խնդիրներով, միջազգային հանրության և ռուսաստանյան հասարակության իրարամերժ արձագանքներով, որոնք հրատապ են դարձնում քաղաքական կանխակալ դիրքորոշումներից զերծ գիտական-քաղաքագիտական լուսաբանումները:

Վերջին վեց-յոթ տարվա ընթացքում Ռուսաստանը վերանայել է արտաքին քաղաքականության ինչպես իր գերակայությունները, այպես էլ՝ բովանդակությունը: Արևմուտքի կառույցներին ՌԴ-ի համար ընդունելի պայմաններով ինտեգրման և Ռուսաստանի գլխավորությամբ նախկին Խորհրդային Միության երկրների հետ ուժի կենտրոն ստեղծելու Մոսկվայի հետխորհրդային կուրսի գլխավոր ուղղություններն էականորեն վերանայվեցին 2014 թվականի ուկրաինական ճգնաժամի հետևանքով[1]: Դրանից կարճ ժամանակ անց էլ փլուզվել էր Չինաստանի հետ սերտ դաշինքի ձևավորման հույսը: Արդյունքում՝ երկրի աշխարհաքաղաքական իրավիճակում ներկայումս լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել: Արևմտյան երկրների հետ Ռուսաստանը կամ առճակատման մեջ է (ԱՄՆ), կամ այդ հարաբերություններին բնորոշ է օտարումը (ԵՄ) [2]: ԽՍՀՄ փլուզման արդյունքում անկախացած Ուկրաինայի, Մերձբալթյան երկրների և Վրաստանի հետ հարաբերությունները թշնամականից ոչ բարեկամական տիրույթում են: Պրագմատիկ համագործակցության ձևաչափ է ձևավորվել Ադրբեջանի և Ուզբեկստանի հետ: Կրեմլը Եվրասիական միության շրջանակներում ինտեգրման առաջընթաց գործընթաց է զարգացնում Ղազախստանի և Բելառուսի հետ, սակայն դրա արդյունավետությունը համեմատաբար ցածր է Հայաստանի և Տաջիկստանի հետ[3]: Չինաստանի հետ հարաբերություններին դժվար է միանշանակ բնութագրում տալ, բայց մերձենալու երկկողմանի ձգտում կա՝ չնայած որոշ հետազոտական շրջանակներում գտնում են, որ դրանք անհավասարաչափ զարգացում ունեն և ավելի շատ Պեկինի օգտին են[4]:

Ստեղծվեց բավականին յուրօրինակ իրավիճակ, երբ երկրի քաղաքական ղեկավարությունը և նախագահ Վ. Պուտինը ստիպված պետք է ընտրեին արտաքին քաղաքականության նոր գերակայություններ: Տպավորությունն այն էր, որ այն կարող է լինել դեպի Արևելք, դեպի Չինաստան և ասիական տարածաշրջաններ: Բայց կատարվեց ինքնատիպ, տրամաբանական շրջադարձ ոչ թե դեպի արևելք, այլ դեպի ինքն իրեն : Կոմունիստական գաղափարախոսությունից երկրի հրաժարվելուց հետո անցած տարիների ընթացքում պարզ դարձավ, որ Ռուսաստանը հակառակ 1990-ական թթ. ելցինյան վարչակարգի դիրքորոշումների, չի կարող համակերպվել և ընդունել ԱՄՆ գլոբալ

---

* Հոդվածն ընդունվել է 06.10.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը: 13.10.21:

առաջնորդությունը, ինչը փակում է իր ճանապարհը դեպի Արևմուտքի հավաքական կառույցներ: Հասկանալի դարձավ նաև, որ ԱՄՆ-ն մտադիր չէ համակերպվել ՌԴ-ի արտաքին քաղաքական ինքնուրույնության հետ, իսկ ԵՄ-ի երկրները՝ ներռուսաստանյան կարգերի հետ, ինչը ոչ միայն փակեց ընդլայնված Արևմուտքին Ռուսաստանի ինտեգրման հարցը, այլև՝ պայմաններ ստեղծեց գերտերությունների մրցակցության և արժեհամակարգային դիմակայության վերսկսման համար: Դադարեցվեց ՌԴ անդամակցությունը Մեծ Ութնյակին, որը կրկին դարձավ Յոթնյակ և դադարեցվեց ՆԱՏՕ-ՌԴ խորհրդի գործունեությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո՝ անցած քառորդ դարի ընթացքում նրա նախկին հանրապետությունները հիմնականում անցել են նոր անկախ պետությունների կառուցման առաջին փուլը: 2013-2014 թվականների ուկրաինական երկրորդ Մայդանի հիմքում ընկած էր երկրի էլիտայի ձգտումն՝ Արևմուտքի օգնությամբ վերջնականապես խզել այն կապերը, որոնք Ուկրաինան կապում էին Ռուսաստանի հետ: Ուկրաինայի իրադարձություններին Մոսկվայի ուժային արձագանքից վախեցած ՌԴ-ի երկու մերձավոր գործընկերները՝ Բելառուսն ու Ղազախստանը կանգնեցին ընտրության առաջ: Կամ ԱՊՀ որոշ երկրների օրինակով գնալ Ռուսաստանից՝ է՛լ ավելի տարանջատման ուղղության ճանապարհով, կամ՝ ընդունել Կրեմլի խաղի կանոնները և արագացնել ինտեգրման խորացման կուրսը: 2021 թ. ՌԴ-Բելոռուս 28 համաձայնագրերի կնքումը ցույց տվեց, որ Լուկաշենկոն, գունավոր հեղափոխության սցենարներից խույս տալու համար, ընտրեց երկրորդ ուղին:

Կարող ենք արձանագրել, որ Ռուսաստանն այժմ կորցրել է ռազմավարական գործընկերներին Արևմուտքում: Արևմուտք-Ռուսաստան փոխհարաբերություններն իջեցվել են պատժամիջոցների կիրառման մակարդակին: ԱՄՆ-ն ամեն ինչ արեց խափանելու ռուսական գազատարի երկրորդ գծի կառուցումը Բալթիկ ծովով: Դաշնակիցները մերձավոր շրջապատում ևս հուսալի չեն: Աշխարհաքաղաքականորեն նա միայնակ է, բայց միևնույն ժամանակ՝ ազատ: Ժամանակակից Ռուսաստանը շատ թուլություններ ու խոցելի տեղեր ունի: Ռուսական տնտեսության ծավալները զիջում ԱՄՆ-ին, ԵՄ-ին և Չինաստանին: Երկրի գիտատեխնիկական ներուժը զգալիորեն հետ է մնում ժամանակակից առաջատար երկրներից: Այնուամենայնիվ, Ռուսաստանը դեռ կարող է գլոբալ դրական դերակատարում ունենալ, եթե երկրում կուտակված ներքին հակասությունները կառուցողական լուծում գտնեն:

Աշխարհաքաղաքական նպատակասլացությունը կարող է առանցքային ուղենիշ դառնալ հետխորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության վերահմաստավորման համար: Նախկինում Մոսկվան ստիպված էր գործնականում ավելի շատ արձագանքել իր շահերի դեմ ուղղված գործողություններին, կամ՝ շեշտը դնել հաջող տակտիկական քայլերի և խորամանկ հակադարձումների վրա: Նման մոտեցումը թույլ տվեց որոշակի հաջողությունների հասնել, բայց այն դարձավ այն պատճառներից մեկը, որն հանգեցրեց հարաբերությունների ճգնաժամին՝ արևմտյան ուղղությամբ և ԱՊՀ տարածաշրջանում, ապա՝ 2014 թվականի աշխարհաքաղաքական «աղետին»: Ռուսաստանի ապագա առաջնորդները, պետք է կրկին գնահատեն աշխարհաքաղաքական իրավիճակը, գույքագրեն պետության արտաքին քաղաքական նպատակները և դրանց հասնելու ռազմավարությունները: Հնարավոր է նաև երկրի քաղաքական էլիտաներն Արևմուտքի հետ առճակատումից ձերբազատվելու ուղի ընտրեն:

Ռուսաստանի ղեկավարությանը հաճախ մեղադրում են արտաքին քաղաքականության ռազմավարության բացակայության մեջ: Դա այնքան էլ արդար չէ, որովհետև խնդիրն ավելի շուտ հայտարարված նպատակների անբավարար իրատեսականությունն է, կամ՝ դրված խնդիրների լուծման հնարավորությունների բացակայությունը: Թվում է, որ այժմ, երբ միջազգային խնդիրները շոշափեցին ընդհանուր առմամբ ռուսաստանյան հասարակության շահերը, ժամանակն է լայն մասնագիտական քննար-

կում ծավալել երկրի արտաքին քաղաքականության հիմնական նպատակների ու խնդիրների և դրանց իրականացման ուղիների մասին: Առաջարկվող հոդվածը նման քննարկման մեջ ընդգրկվելու փորձ է :

Արդի աշխարհակարգը հնարավորություն է տալիս պետություններին փոխել իրենց միջազգային կողմնորոշումը և արտաքին քաղաքական նպատակներն ու գործունեության մեթոդները: 21-րդ դարի երրորդ տասնամյակի շեմին Ռուսաստանը քաղաքական Եվրոպայի կամ Ասիայի մաս չէ: «Մեծ երկրի» ՝Խորհրդային Միության, իսկ ավելի վաղ՝ Ռուսական կայսրության նախկին ծայրամասերը, ՌԴ-ի համար դարձել են բարեկամության տարբեր աստիճանի օտարերկրյա պետություններ: Ռուսաստանը չի մտնում ինչ-որ մեծ տարածաշրջանային տնտեսաքաղաքական ընդհանրությունների մեջ, բայց նաև սեփական բլոկ կառուցելու նպատակ ունի: Դեռևս այն չի պատկանում որևէ աշխարհաքաղաքական կամ գաղափարական «ընտանիքի»: Կորցնելով հսկա կայսրությունները՝ մեկ՝ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխության, մեկ էլ՝ 1991 թ. ԽՍՀՄ ինքնափլուզման հետևանքով, քաղաքական քարտեզի վրա Ռուսաստանն, այնուամենայնիվ, հստակ առանձնանում է գլոբալ համատեքստում՝ դեռևս մնալով համաշխարհային ուժային կենտրոն: Դժվար է ասել, թե նման դրությունը ժամանակավոր է, կարճաժամկետ, թե՝ երկարաժամկետ: Տեսակետ կա, որ հետո կվերականգնվի Արևմուտքի հետ նախկին հարաբերությունները, կլինի հաշտեցում ընդհուպ մինչև ինտեգրման նոր փորձերը, կամ էլ կգնա խորհրդային կայսերական տարածքի երբեմնի միասնության վերականգնման գործընթաց: Կան նաև ծայրահեղական վատատեսական կանխատեսումներ ՌԴ փլուզման մասին, խորհրդային կայսրության ինքնափլուզման օրինակով: Սրանք տեսակետներ են, որոնք հնչեցվում են հետազոտական և փորձագիտական կենտրոններում, բայց նրանց հեղինակ քաղաքագետները դեռևս չունեն փաստարկված հիմնավորումներ:

Ուկրաինական ճգնաժամն առիթ դարձավ Ռուսաստանի և ԱՄՆ-ի նոր առճակատման, որը Դ. Տրենինի կարծիքով նոր հիբրիդային պատերազմի մեկնարկ է[5]: Մոսկվայի և Վաշինգտոնի նոր առճակատման պատճառներն, իհարկե, ավելի խորն են, բայց Սիրիայում, Ղրիմում և Դոնբասում տեղի ունեցող իրադարձությունները մի քանի տարի շարունակ ռուս-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը վերածեցին ակտիվ հակամարտության: Այդ ժամանակից ի վեր՝ այդ հակամարտությունը ոչ միայն շարունակվում, այլև անընդհատ խորանում է: Հիմքեր չկան ենթադրելու, որ այն կավարտվի 2024-ին՝ ԱՄՆ նոր նախագահի ընտրությամբ: Նույնիսկ բոլորովին պարտադիր չէ, որ Ռուսաստանում բարձրագույն իշխանության փոփոխությունը, երբ այն տեղի ունենա, կհանգեցնի Վաշինգտոնի հետ առճակատման ավարտին: Հարցը դրված է սկզբունքորեն. կամ՝ Մոսկվան ընդունում է պարտությունը և համաձայնում է այսուհետ խաղալ ԱՄՆ-ի սահմանած կանոններով, կամ՝ Վաշինգտոնը ճանաչում է աշխարհում իր շահերը պաշտպանելու և առաջ մղելու Մոսկվայի իրավունքը: Փոխզիջումը սկզբունքորեն հնարավոր է, սակայն ԱՄՆ-ն առայժմ մերժում է այդ հնարավորությունը: Հիբրիդային պատերազմի դադարեցման պայմանները դեռ պարզ չեն, քանի որ դրա վճռական փուլը դեռ չի եկել: Մեկ բան ակնհայտ է՝ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում 1990-ականների սկզբի իրավիճակին վերադառնալու հավանականությունը շատ փոքր է: Եվրոպայի հետ հարաբերություններում ևս մեծ փոփոխություններ չեն կանխատեսվում: ԱՄՆ-ի արբանյակ Եվրամիության երկրներն իրենց գործողությունների հրահանգներն ստանում են օվկիանոսից այն կողմ և, ոչ ոք հարցականի տակ չի դնում Եվրոպայի կախվածության փաստը:

Ռուսաստանի և ԵՄ ճանապարհները բաժանվեցին ուկրաինական ճգնաժամից մի քանի տարի առաջ՝ հիմնականում քաղաքական արժեքների անհամատեղելիության պատճառով: Հենց այդ պատճառով էլ ձախողվեց ՌԴ-ի փորձը՝ համընկնող շահերի հիման վրա Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ Մեծ Եվրոպա կառուցելու փորձը[6]: Այս

ձախողման հետ մեկտեղ վերջնականապես կորցրել է «համաեվրոպական տան» ավելի վաղ հայեցակարգը, որն առաջ էր քաշել խորհրդային վերջին ղեկավար Գորբաչովը՝ 1989թ., Եվրոպայի Խորհրդում իր հայտնի ելույթում: Ռուսաստանի և Եվրոպայի միջև տարանջատումը նույնիսկ ավելի խորն է, քան կար ոչ վաղ անցյալում: 21-րդ դարի սկզբին Եվրոպան դադարել է Ռուսաստանի համար լինել զարգացման լավագույն օրինակ, մոդել և արդիականացման միակ աղբյուր, ինչպիսին այն եղել էր նրա համար երեք հարյուրամյակների ընթացքում՝ սկսած Պյոտր Առաջինի բարեփոխումների դարաշրջանից: Գլոբալ աշխարհում, հատկապես՝ Ասիայում հայտնվել են զարգացման այլ արդյունավետ մոդելներ, որովհետև Եվրոպայի սոցիալ-տնտեսական և քաղաքական մոդելը ոչ միայն նվաճումներ է ցուցադրում, այլև ավելի ու ավելի շատ խնդիրներ է ծնում: Օրինակը բացասական միտումներից է եվրահնտեգրման գործընթացում, հակասություններն ու տարաձայնությունները, եվրասկեպտիցիզմի տարածումը քաղաքական էլիտաների որոշ հատվածներում և այլն: Վերջապես՝ եվրոպացիների առանձնահատկության թմբկահարումը և Եվրոպայի իդեալականացումը սկսել է հոգնեցնել ռուսներին, իսկ ԵՄ-ի՝ որպես ինքնուրույն ռազմավարական խաղացող գործելու անկարողությունը վերջին ճգնաժամերում, միջազգային ասպարեզում նվազեցնում է քաղաքական համագործակցության արժեքը:

Քաղաքական զարգացումները ՌԴ-ԵՄ փոխհարաբերություններում առաջ են բերել նոր իրողություններ: Ինչպես նշեցինք՝ կա կանխատեսում՝ ռուսական պետության պատմական միջուկի փլուզման անդառնալի գործընթացի վերաբերյալ: Միաժամանակ, Ուկրաինայի մեկուսացումը Ռուսաստանից՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և հոգևոր հարաբերություններում[7], բացառում է նրանց ինտեգրման որևէ հնարավորություն, եթե, իհարկե, Կիևում չվերականգնվի պրոռուսական իշխանությունը: Վաշինգտոնում և Բրյուսելում ձգտում են այլ պայմաններում և այլ տեմպերով անջատել նաև Բելոռուսը: Այս երկիրն ընդգրկվել է Արևելյան գործընկերության ԵՄ ծրագրում, անընդհատ շեշտում են Բելոռուսի «ինքնիշխանության» պահպանման անհրաժեշտությունը, բացառված չէ՝ բելոռուսական մայդանի սցենարի կազմակերպումը, որն ակնհայտ էր 2020-21թթ. ծավալված հակակառավարական ցույցերի ժամանակ: Բելառուսի հետ Ռուսաստանի տարանջատման գործընթացները հիմնավորվում են՝ երկիրը աստիճանաբար հետխորհրդային հանրապետությունից լիարժեք արևելաեվրոպական պետության վերածելու «ազնիվ» ցանկությամբ, բայց բոլորիս համար էլ պարզ է, թե ինչ է թաքնված այս ազնվության տակ: Բելոռուսական ուղղությամբ Կրեմլը ձեռքբերումներ ունի: Բելոռուսի նախագահ Լուկաշենկոն, ի վերջո, գնաց ՌԴ-Բելոռուս միավորումն ավարտելուն նպատակադրված մոտ երեք տասնյակ համաձայնագրերի կնքմանը, բայց փորձագետների կարծիքով՝ Եվրասիական տնտեսական միությունը, իր ողջ գործնական օգտակարության դեպքում էլ, դեռևս չի կարող դառնալ Եվրասիայում ուժի կենտրոն, ինչպիսին այն ծրագրվել էր սկզբում[8]: ԵԱՏՄ-ն դեռևս սահմանափակ նպատակներով և հնարավորություններով միավորում է: Կա անդամ պետությունների շահերի բախում, որի պատճառով, Ռուսական կայսրությունից ԽՍՀՄ անցումից հետո, անցումը՝ դեպի «փոքր Եվրասիա», դեռ ավարտին չի հասել:

Ռուսաստանի քաղաքական ղեկավարությունը՝ հակառակ այս կանխատեսումների, բավականին համառորեն ձգտում է հասնել իր նպատակներին: Նա առայժմ միայնակ է քաշում այս բեռը՝ հույս ունենալով ակտիվացնել նաև Բելոռուսին և Ղազախստանին: Երկիրը գտնվում է Եվրասիայի հյուսիսում՝ Պորտուգալիայից մինչև Չուկոտկա միասնական մայրցամաքում: 2010թ.-ին սկսված Չինաստանի աշխարհատնտեսական և քաղաքական առաջխաղացումը դեպի արևմուտք՝ «Մեկ գոտի, մեկ ուղի» նախաձեռնությունը[9], ջնջում է Ասիայի և Եվրոպայի միջև վերջին նշանակալի խոչընդոտները: Այժմ տնտեսական և մշակութային կապերի, ինչպես նաև հաղորդակցության զարգացման շնորհիվ ձևավորվում է միասնական մայրցամաքային տարածք իր բնա-

կան սահմաններում: Այդ տարածքը, որն անվանում են նաև Մեծ Եվրասիա, Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցության ծավալման տարածքն է, որն ավելի է կարևորվում Արևմուտքի ձեռնարկած պատժամիջոցների հետևանքով: Եվրասիական ուղղությամբ ունեցած ձեռքբերումներն ինչ որ տեղ կարող են լրացնել եվրոպական ուղղությամբ կրած կորուստներին:

Ռուսաստանը Մեծ Եվրասիայի աշխարհագրական կենտրոնը չէ, պատմականորեն մայրցամաքի Արևմուտքն ու Արևելքը կապող հիմնական ճանապարհները (օրինակ Մետաքսի մեծ ճանապարհը) նախկինում անցել են ռուսական տարածքից հարավ: Ռուսաստանը նաև եվրասիական ծայրամաս չէ: Աշխարհագրական դիրքը նրան դարձնում է այն մեծ թվով երկրների անմիջական կամ մերձավոր հարևանը, որոնք դեպի Չինաստան, Ճապոնիա, Թուրքիա, Իրան և հետխորհրդային երկրներ հաղորդակցության ուղիների կարիք ունեն: Այս առումով Ռուսաստանը բացառիկ հնարավորություններ ունի, որովհետև նա ելք ունի Եվրասիայի ափերը ողողող երեք օվկիանոսներ, սահմանակից է սկանդինավյան և արևելաեվրոպական երկրներից մինչև Կորեա և Չինաստան և հետևաբար, ունի միջազգային շփման հարուստ ու արժեքավոր փորձ: Արտաքին աշխարհի հետ շփման նման բարձր աստիճանը բացառիկ հնարավորություններ է բացում: Եվրասիական ինտեգրացիայի հաջող ավարտը կարող է նրան դարձնել Մեծ Եվրասիայում քաղաքակրթությունների կամուրջ:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Ռուսաստանին անհրաժեշտ է քաղաքականապես չկտրվել Եվրոպայից և հեռու մնալ համաշխարհային թիվ մեկ կենտրոն Արևմուտքից: Երկրի քաղաքական առաջնորդները չպետք է ընկնեն ծայրահեղության մեջ և, ի պատասխան ռուսական շահերի ոտնահարման, դառնալ Ասիայի մաս կամ փորձել հակամերիկյան դաշինք ստեղծել Չինաստանի հետ: Ռուսներն ունեն իրենց դեմքը, իրենց առանձնահատուկ շահերը, իրենց համաշխարհային կարևոր դերակատարումը: Կրեմլում սա լավ գիտակցում են և պուտինյան վարչակազմն աշխատում է պահպանել հավասարակշռությունը Եվրոպայի և Ասիայի միջև, որովհետև հասկացել են, որ Պեկինն իր ինքնուրույն քաղաքական գիծն է տանում և հակառուսական դաշնակից չի կարող դառնալ: Նույնիսկ ծանր «ամուսնալուծությունից» հետո, Ուկրաինան մնում է խոշոր հարևան պետություն, որի հետ Ռուսաստանն ապագայում, այսպես թե այնպես, պետք է կառուցի հարաբերությունները: Մինսկի հետ հարաբերություններում Մոսկվան պետք է հաշվի առնի այն սխալները, որոնք ՌԴ-ն թույլ է տվել ուկրաինական ճգնաժամում: Օրինակ, եթե լիակատար միավորումը չստացվի, պարտադիր չէ, որ Ռուսաստանը թշնամական հարաբերություններ ունենա Բելառուսի հետ: «Դեմքով» կամ «թիկունքով» կտրուկ շրջադարձերի փոխարեն՝ Մոսկվային անհրաժեշտ է երկրի արտաքին քաղաքականությունը բերել կայուն հավասարակշռության՝ համաշխարհային Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և զարգացող Հարավի միջև: Ապագա ռուսական ստրատեգներին կպահանջվի 360 աստիճանի կլոր տեսլական, որպեսզի համապատասխանի աշխարհում Ռուսաստանի Նոր դրությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արտաքին քաղաքականության այս ուղղությունների տարրերը գալիս էին դեռևս 1989թ. **Գորբաչովի** առաջ քաշած **«եվրոպական ընդհանուր տան»** կառուցման պլանից: Արևմուտքի հետ համագործակցությանն էր ձգտում նաև Ելցինը, որն 1990-ական թթ. բազմիցս հայտարարություններ արեց ԱՄՆ և եվրոպական երկրների հետ համապարփակ գործընկերության անհրաժեշտության մասին: Այս քաղաքական ուղղությանն էր վերաբերվում նաև ՌԴ Նախագահ **Վ. Պուտինի** ծրագրային ելույթը գերմանական բունդեսթագում՝ 2001 թ.-ին, որտեղ նա խոսում էր Ռուսաստանի եվրոպական ընտրության մասին: Նրան է պատ-

կանում նաև 2010 թ.-ին բարձրաձայնած **«Մեծ Եվրոպայի»** մասին հայեցակարգը, որը ենթադրում էր տնտեսական համագործակցության ստեղծումը Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ: 2010 թ. Դ. Մեդվեդևի առաջարկը Ռուսաստան-ՆԱՏՕ ընդհանուր հակահրթիռային պաշտպանության անվտանգության տարածության մասին՝ Եվրանտլանտյան տարածության ստեղծման մասին: 1990-ական թթ. Արևմուտքի հետ ինտեգրման ճանապարհին Կրեմլը գործնական լուրջ քայլեր էր արել: 1998 թ. ՌԴ դարձավ «Մեծ ութնյակի» անդամ, 1997 և 2002 թթ. համագործակցության պայմանագրեր կնքեց ՆԱՏՕ-ի հետ, 1997 թ.-ին Եվրոպական միության հետ, իսկ 1996թ. անդամակցեց Եվրոպայի Խորհրդին:

2. Տե՛ս Россия — Запад. Пресс-выпуск. Левада-центр. 14 мая 2018 года // https://www.levada.ru/2018/05/14/rossiya-zapad-2/
3. Վ.Վ.Պուտինը լուրջ փորձեր ձեռնարկեց հետխորհրդային տարածքը վերաինտեգրելու համար: Այս ուղղությամբ ամրապնդվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը, Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի մաքսային միությունը (2009), որն այնուհետև վերափոխվեց Եվրասիական տնտեսական միության (2015): Տե՛ս «Իզվեստիա» թերթում հրատարակված Վլադիմիր Պուտինի նախընտրական հոդվածը՝ Եվրասիական ինտեգրման մանիֆեստը. **Путин В.** Россия сосредотачивается — вызовы, на которые мы должны ответить. — Известия. — 16 января 2012 года // https://iz.ru/news/511884.
4. Տե՛ս **Янь Сюэтун,** «Не понимаю, почему Россия не настаивает на формировании альянса с Китаем»// Коммерсантъ, 17 марта 2017 года, https://www.kommersant.ru/doc/3243633; **Тренин Д.** От Большой Европы к Большой Азии? Китайско-российская Антанта. — М.: Московский Центр Карнеги, 2015 // https://carnegie.ru/2015/05/13/ru-pub-60066.
5. Տե՛ս **Тренин Д., Липский А**. Россия и США находятся в состоянии гибридной войны. Это всерьез и надолго. — Новая газета. — 27 сентября 2018 года.
6. Տե՛ս **Putin**: Plädoyer für Wirtschaftsgemeinschaft. — Sueddeutsche Zeitung. — 25 November, 2010.
7. Այս ոլորտում հատկանշական էր 2019թ. ուկրաինական ուղղափառ եկեղեցու անջատումը ռուսականից:
8. Այս գաղափարն էր շեշտում Պուտինը դեռևս 2011 թ.-ին: Տե՛ս Путин В. Новый интеграционный проект для Евразии — будущее, которое рождается сегодня. — Известия. — 3 октября 2011 года.
9. Այս նախաձեռնության հեղինակը Չինաստանի առաջնորդ Սի Ցզինպինն է, որը նա առաջադրեց 2013 թ.:

ԱՄՓՈՓՈԳԻՐ

Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության նպատակների ու խնդիրների շուրջ

Գարիկ Քեռյան

Ռուսաստանը վերջին տարիներին վերանայել է արտաքին քաղաքականության ինչպես իր գերակայությունները, այպես էլ բովանդակությունը: Արևմուտքի կառույցներին 1990-ական թթ. ՌԴ-ի համար ընդունելի պայմաններով ինտեգրման և Ռուսաստանի գլխավորությամբ նախկին Խորհրդային Միության երկրների հետ ուժի կենտրոն ստեղծելու Մոսկվայի հետխորհրդային կուրսի գլխավոր ուղղություններն էակա-

նորեն վերանայվեցին 2014 թվականի ուկրաինական ճգնաժամի հետևանքով: Զգալի էր նաև սիրիական ճգնաժամի ազդեցությունը և Արևմուտքի կողմից կիրառվող պատ-ժամիջոցները: Երկրի քաղաքական ղեկավարությունը և նախագահ Վ. Պուտինը ստիպված պետք է ընտրեին արտաքին քաղաքականության նոր գերակայությունները, որոնց ուսումնասիրությանն է նվիրված այս հոդվածը:

РЕЗЮМЕ

О целях и задачах внешней политики Российской Федерации

Гарик Керян

Ключевые слова: Россия, внешняя политика, геополитические интересы, США, ЕС, евразийская интеграция.

В последние годы Россия пересмотрела как приоритеты своей внешней политики, так и ее содержание. Основные направления постсоветского курса Москвы в 1990-е годы - это интеграция с западными структурами и со странами бывшего Советского Союза на приемлемых для России условиях, которая была существенно пересмотрена после кризиса 2014 года в Украине. Сирийский кризис и санкции, введенные Западом, оказали значительное влияние. Политическое руководство страны и президент В.Путин выбрали новые внешнеполитические приоритеты, которым посвящена данная статья.

SUMMARY

On the Goals and Objectives of the Foreign Policy of the Russian Federation

Garik Keryan

Key words: Russia, foreign policy, geopolitical interests, USA, EU, Eurasian integration**.**

In recent years, Russia has revised both the priorities of its foreign policy and its content. The main directions of Moscow's post-Soviet course in the 1990s were integration with Western structures and with the countries of the former Soviet Union on terms acceptable to Russia, which was significantly revised after the 2014 crisis in Ukraine. The Syrian crisis and sanctions imposed by the West have had a significant impact. The political leadership of the country and President Vladimir Putin have chosen new foreign policy priorities, to which this article is devoted.